ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/5.1.2-25
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մարտի 26-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի փետրվարի 25-ին կայացած նիստի N2/5.1.2.-25 արձանագրությամբ՝ **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ**-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի տրամադրման վերաբերյալ, այն է՝ որոշակի տեխնիկական շտկումներ, մասնավորապես՝ ԱԱՀ արժեքը չներառել ֆինանսական նախահաշվի տողերում, այն նշել առանձին տողով, Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

• **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի** հետ՝ 24 000 000 (քսանչորս միլիոն) (այդ թվում՝ 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ ԱԱՀ) ՀՀ դրամի չափով:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կազմակերպության հետ կնքվող պայմնագիրը նախատեսում է բանակցային փուլ, այն է՝ պայմանագրում առկա մի շարք հավելվածներ պետք է լրացվեն կամակերպության կողմից, պայմանագրի կնքումը նախատեսել պայմանագրի լրացված հավելվածների տրամադրումից հետո:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____